Ապատեղեկատվության հակազդման համակցված ձեռնարկ

Ձեռնարկը նախատեսված է կիրառման համար ՔՀԿ-ների, մեդիայի, պետական մարմինների և մասնավոր սեկտորի կողմից։

Սույն ձեռնարկը պատրաստվել է «Հայաստանի ապատեղեկատվության դիմադրողականության ակադեմիա. ռազմավարական պաշտպանության կարողությունների զարգացում Լիտվայի փորձի փոխանցման միջոցով» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից: Ծրագիրը ֆինանսավորվում է ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության դեսպանության կողմից՝ Լիտվայի զարգացման համագործակցության և ժողովրդավարության աջակցման ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատու է Իրավաբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Լիտվայի Հանրապետության դեսպանության կամ կառավարության տեսակետները:

Ձեռնարկը պատրաստել են «Հայաստանի ապատեղեկատվության դիմադրողականության ակադեմիա. ռազմավարական պաշտպանության կարողությունների զարգացում Լիտվայի փորձի փոխանցման միջոցով» ծրագրի փորձագետներ Մարիամ Զադոյանը և Սյուզաննա Սողոմոնյանը, խորհրդատու՝ միջազգային փորձագետ, դոկտոր Ներիյուս Մալյուկևիչյուսը:

Ձեռնարկից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, 2025

ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7. գրասենյակ 2

Հեռախոս՝ +37410 540199

Էլ. փոստ՝ info@armla.am

Վեբ կայք՝ https://armla.am/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Ապատեղեկատվության ժամանակակից մարտահրավերները

21-րդ դարում ապատեղեկատվությունը վերածվել է համակարգված ռազմավարական սպառնալիքի: Այն կիրառվում է որպես քաղաքական, տնտեսական և գաղափարական ազդեցության գործիք՝ նպատակ ունենալով թուլացնել հասարակությունների կայունությունն ու համախմբվածությունը:

Տարածման նոր տեխնոլոգիաները՝ ալգորիթմային միջավայրը, սոցիալական մեդիա հարթակները, բոտ-ցանցերը, դիպֆեյքերը և գեներատիվ արհեստական բանականությունը, ապատեղեկատվությունը դարձրել են ոչ միայն արագ տարածվող, այլև դժվար հայտնաբերելի:

Հիմնական **հետևանքները:**

- Հանրային վստահության անկում պետական և հասարակական ինստիտուտների նկատմամբ:
- Հասարակության բևեռացում և սոցիալական պառակտում:
- Ժողովրդավարական գործընթացների թուլացում և քաղաքական կայունության խաթարում:
- Ազգային անվտանգության սպառնալիքների խորացում:

1.2 Ձեռնարկի նպատակը և կիրառման շրջանակը

Սույն ձեռնարկի **նպատակն** է շահագրգիռ կողմերին տրամադրել համակարգային գործիքակազմ և մեթոդաբանություն՝ ապատեղեկատվության կանխարգելման, հայտնաբերման, արձագանքման և վերականգնման համար:

Թիրախային շահառուներն են:

- ՔՀԿ-ներ՝ մոնիթորինգի, փաստերի ստուգման և հանրային իրազեկման իրականացում.
- Լրատվամիջոցներ՝ բովանդակության հավաստիության ստուգում և պրոֆեսիոնալ ստանդարտների պահպանում.
- Պետական մարմիններ՝ համակարգված արձագանքման և ռազմավարական հաղորդակցության ապահովում
- Մասնավոր հատված՝ թվային լուծումների մշակում և տեղեկատվական անվտանգության ապահովում:

ԲԱԺԻՆ II. ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

2.1 Ապատեղեկատվություն, կեղծ տեղեկատվություն և վնասաբեր տեղեկատվություն

Ապատեղեկատվության դեմ արդյունավետ պայքարի առաջին քայլը ճիշտ տերմինաբանության օգտագործումն է: Գոյություն ունեն ապատեղեկատվության երեք հիմնական ձևեր, որոնք տարբերվում են դիտավորությամբ և բովանդակությամբ:

Եզրույթ	Սահմանում	Օրինակ
Կեղծ տեղեկատվություն (Misinformation)	Կեղծ կամ ոչ ճշգրիտ տեղեկություն՝ առանց վնաս պատճառելու դիտավորության: Առաջանում է անճշտությունից, թարգմանության սխալից կամ աղբյուրի հուսալիության բացակայությունից	*Լրատվամիջոցը սխալ թվեր է հրապարակում վիճակագրական զեկույցի սխալ մեկնաբանման պատճառով:*
Ապատեղեկատվություն (Disinformation)	Դիտավորությամբ ստեղծված կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություն՝ հանրությանը մոլորեցնելու նպատակով: Նպատակն է սպառողի վարքագծի մանիպուլյացիան՝ քաղաքական, տնտեսական կամ գաղափարական շահի համար:	*Կեղծ լուր է տարածվում պաշտոնյայի օֆշորային հաշիվների մասին՝ նրա հեղինակությունը վարկաբեկելու նպատակով:*
Վնասաբեր տեղեկատվություն (Malinformation)	Իրական տեղեկություն՝ դիտավորությամբ օգտագործված վնաս պատճառելու նպատակով: Նպատակն է վնաս հասցնել անձի, կազմակերպության կամ պետության համբավին:	*Անձնական տվյալներ են հրապարակվում զրպարտելու և վարկաբեկելու նպատակով:*

2.2 Արտաքին տեղեկատվական մանիպուլյացիաներ (FIMI)

Արտաքին տեղեկատվական մանիպուլյացիաները (Foreign Information Manipulation and Interference) օտար պետական կամ ոչ պետական դերակատարների համակարգված գործողություններն են՝ ուղղված ներքին քաղաքական գործընթացներին ազդելուն: FIMI-ն ավելի լայն հասկացություն է քան ապատեղեկատվությունը, որը հանդիսանում է FIMI-ի գործիքներից մեկը:

FIMI-ը ներառում է նաև՝

- **Բովանդակության արհեստական մեծացում**: Իրական կամ կեղծ նյութի համակարգված տարածում բոտերի և կոորդինացված հաշիվների միջոցով:
- **Օրակարգի փոխարինում**: Կարևոր թեմաների «ծածկում» շեղող նյութերով՝ հանրության ուշադրությունը վերահղելու համար:
- **Վախի և թշնամանքի հրահրում**: Բևեռացնող բովանդակության տարածում՝ հասարակությունը խմբավորելու և հակամարտությունները խորացնելու նպատակով:

ԲԱԺԻՆ III. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ ԵՎ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ

3.1 Ժամանակակից տեխնոլոգիական գործիքներ

Ապատեղեկատվության ստեղծման և տարածման համար այսօր օգտագործվում են հետևյալ հիմնական տեխնոլոգիաները՝

Դիպֆեյք տեխնոլոգիա: Արհեստական բանականության միջոցով սինթեզված տեսա-ձայնային նյութեր, որտեղ մարդիկ ասում կամ անում են այն, ինչ իրականում չեն արել: Գեներատիվ ԱԲ-ն թույլ է տալիս րոպեների ընթացքում ստեղծել իրականին նմանվող տեսանյութ, ձայն և լուսանկար: Այս տեխնոլոգիան կարող է օգտագործվել անհատների հեղինակության վնասման և քաղաքական գործընթացների խեղաթյուրման համար:

Բոտ-ցանցեր և տրոլ-ֆաբրիկաներ: Ծրագրային գործիքներ, որոնք աշխատում են նախապես տրված առաջադրանքով և ունեն առցանց փոխազդեցության ունակություններ: Դրանք օգտագործվում են կեղծ «հանրային կարծիքի» ստեղծման, նարատիվների զանգվածային տարածման և հակառակ կարծիք արտահայտողների հարձակումների համար:

Գեներատիվ ԱԲ համակարգեր: ChatGPT, MidJourney և նմանատիպ գործիքներ, որոնք կարող են արագ գեներացնել մեծ ծավալի տեքստային և վիզուալ բովանդակություն: Սա բազմապատկում է կեղծ բովանդակության արտադրության հնարավորությունները:

3.2 Տեղեկատվական շղթայի դերակատարները

Ապատեղեկատվության տարածման շղթան բաղկացած է չորս հիմնական օղակներից՝



Որքան բազմաշերտ է շղթան, այնքան բարդ է հայտնաբերել ապատեղեկատվության սկզբնաղբյուրը: Յուրաքանչյուր օղակ ունի իր դերն ու պատասխանատվությունը ապատեղեկատվության շրջանառության մեջ:

3.3 Տարածման մեխանիզմները

Ալգորիթմային միջավայր: Սոցիալական ցանցերի ալգորիթմները առաջնահերթացնում են բարձր ներգրավվածություն ստեղծող բովանդակությունը: Քանի որ սենսացիոն և հուզական նյութերը ավելի շատ արձագանք են ստանում, ապատեղեկատվությունը տարածվում է ավելի արագ, քան ճշմարտացի տեղեկությունները:

Echo Chambers և Filter Bubbles: Տեղեկատվական պղպջակներ, որտեղ օգտատերերը հանդիպում են միայն իրենց համոզմունքներին համընկնող բովանդակության: Սա խորացնում է հասարակական բևեռացումը և նվազեցնում քննադատական մտածողությունը:

Վիրալ տարածում: Երբ նույն կեղծ բովանդակությունը տարբեր ձևերով բազմիցս է հանդիպում, գործում է «կրկնության էֆեկտը» (illusory truth effect)՝ մարդիկ հակված են հավատալ, քանի որ «շատ են տեսել»:

3.4 Մանիպուլյացիոն մեխանիզմները

Ինչպես են գործիքները վերածվում զենքի՝

Կեղծ բովանդակության ստեղծում: Դիպֆեյքերը և ԱԲ-գեներացված նյութերը օգտագործվում են կեղծ ապացույցներ ստեղծելու, պաշտոնյաների վարկաբեկման և խուճապ առաջացնելու համար:

Տարածման ալիքների ստեղծում: Կեղծ մեդիա ցանցեր՝ տարբեր անուններով նույն քարոզչական օրակարգը տարածող «լրատվական» էջեր, որոնք ստեղծում են տեղեկատվական աղմուկ:

Արհեստական grassroots շարժում (Astroturfing): Իրական հանրային աջակցության տպավորություն ստեղծելու նպատակով կազմակերպված կեղծ քաղաքացիական նախաձեռնություններ կամ վերլուծական կենտրոններ:

Մասսայականացում և ամպլիֆիկացիա: Բոտային ցանցերը համակարգված կերպով տարածում են կեղծ նարատիվները՝ օգտագործելով նորաստեղծ հաշիվներ և սոցիալական մեդիայի ազդեցիկ անձանց (influencers):

Աղբյուրների «լվացում» (Source Laundering): Նյութի հրապարակում անծանոթ կայքերում, ապա վերապատմում որպես «հաստատված» տեղեկություն բազմաթիվ աղբյուրներում:

Տեղայնացում և ադապտացիա: Արտասահմանյան նարատիվների հարմարեցում տեղական կոնտեքստին՝ օգտագործելով տեղական լեզու, մշակութային կոդեր և արդիական թեմաներ:

ԲԱԺԻՆ IV. ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՎ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Ապատեղեկատվության հայտնաբերումն ու վավերացումը բազմաշերտ գործընթաց է, որը պահանջում է համակարգված մոտեցում, տեխնիկական գործիքների իմացություն և քննադատական մտածողություն: Սույն բաժինը ներկայացնում է ապատեղեկատվության ճանաչման ազդանշանային համակարգը և փաստերի ստուգման մեթոդաբանությունը:

4.1 Վտանգի ազդանշանների համակարգ

Ապատեղեկատվությունն ունի բնորոշ նշաններ, որոնք կարելի է ճանաչել համակարգված վերլուծության միջոցով: Կարևոր է նշանները դիտարկել համակցված՝ մեկ ազդանշանը դեռ վերջնական ապացույց չէ:

Վերնագրային մանիպուլյացիաներ: Կեղծ լուրերի ամենաակնառու նշաններից են գերզգացական վերնագրերը՝ «Շոկային բացահայտում», «Սարսափելի փաստեր», «Վերջապես ճշմարտությունը»: Բացարձակ պնդումները («Բոլոր բժիշկները...», «Ամեն քաղաքացին պետք է...», «Երբեք մի արեք...») և կետադրական նշանների անհարկի չարաշահումը («Հրատապ!!!», «Տարածեք, քանի չեն ջնջել!!!») պետք է զգուշացնեն ընթերցողին: Քլիքբեյթ վերնագրերը («Երբեք չեք գուշակի, թե ինչ եղավ հետո...», «18+») նպատակ ունեն գրավել ուշադրություն՝ անկախ բովանդակության ճշգրտությունից:

Բովանդակության կասկածելի տարրեր: Անանուն կամ չվավերացված աղբյուրները («մեր տեղեկություններով», «անանուն փորձագետները») հաճախ օգտագործվում են անհիմն պնդումների համար: Հուզական մանիպուլյացիան դրսևորվում է վախի և զայրույթի հրահրող պատկերներով ու բառապաշարով: Տեղեկատվական բացերը՝ ամսաթվի, կոնկրետ տվյալների կամ այլ տեսակետների բացակայությունը, ցույց են տալիս, որ տեղեկատվությունը կարող է լինել թերի կամ միտումնավոր խեղաթյուրված:

Բոտերի և կեղծ օգտահաշիվների ճանաչման նշաններ: Օգտահաշվի վերլուծության ժամանակ ուշադրություն դարձրեք անվան կառուցվածքին (RandomUser12345,

NewsLover999), պրոֆիլի նկարի որակին և բովանդակությանը: Անբնական ակտիվությունը՝ 24/7 հրապարակումներ, գիշերային ժամերին (2:00-6:00) ակտիվություն, մեկ ժամում տասնյակ հրապարակումներ, ցույց է տալիս ավտոմատացված վարքագիծ: Միայն քարոզչական բովանդակությունը, copy-paste հաղորդագրությունները և շատ հետևորդների պարագայում քիչ իրական փոխազդեցությունը բոտային ակտիվության լուրջ ցուցանիշներ են:

4.2 Ձեռքով ստուգման մեթոդաբանություն

Փաստերի ձեռքով ստուգումը հիմնված է **«Որտեղի՞ց» մոտեցման** վրա, որը պահանջում է համակարգված վերլուծություն: Ցանկացած տեղեկատվության ստուգումը սկսվում է **աղբյուրի վավերացումից**՝ պարզելով, թե արդյոք կայքն ունի «Մեր մասին» բաժին խմբագրական թիմի և հեղինակների տվյալներով, առկա են կոնտակտային տվյալներ և ֆիզիկական հասցե, ինչպիսի հրապարակումների պատմություն ունի: Կայքի ստեղծման ամսաթիվը և ուղղության հնարավոր փոփոխությունները կարևոր ցուցանիշներ են վստահելիության գնահատման համար: ArmNIC և WhoisMind հավելվածները թույլ են տալիս արագ ստանալ կայքի գրանցման տվյալները և սեփականատիրոջ մասին տեղեկություններ:

Հրապարակման ժամկետի վավերացումը կանխում է հնացած տեղեկատվության շրջանառությունը: Հաճախ մի քանի տարվա վաղեմություն ունեցող հրապարակումները ներկայացվում են որպես նորություն: Ստուգումը իրականացվում է HTML կոդի վերլուծությամբ (Ctrl+U հրամանով որոնելով published_time, modified_time տողերը), Google որոնման առաջադեմ հրամաններով ("inurl:" օպերատորի կիրառում) և սոցիալական ցանցերում առաջին հրապարակման որոնումով: Wayback Machine արխիվը թույլ է տալիս դիտել կայքի պատմական տարբերակները և հետևել բովանդակության փոփոխություններին:

Բովանդակության խորը վերլուծությունը ներառում է պնդումների վերհանում և դասակարգում, առաջնային աղբյուրների որոնում, տվյալների ու վիճակագրության վերաստուգում:

Հետադարձ պատկերային որոնումը (Reverse Image Search) թույլ է տալիս պարզել պատկերի սկզբնական աղբյուրը և նախորդ օգտագործումները: Հետադարձ պատկերային որոնումը (Google Images, Yandex, TinEye) թույլ է տալիս պարզել պատկերի սկզբնական աղբյուրը և նախորդ օգտագործումները: FotoForensics և Forensically գործիքները բացահայտում են լուսանկարի խմբագրման հետքերը՝ վերլուծելով պիքսելային անոմալիաները:

Տեսանյութերի դեպքում YouTube DataViewer-ը (Amnesty International) ցուցադրում է բեռնման ճշգրիտ ամսաթիվը և մանրապատկերների փաթեթը, իսկ InVID հավելվածը թույլ է տալիս համեմատել տարբեր հարթակներում հրապարակված տարբերակները:

4.3 Ավտոմատացված ստուգման համակարգեր

Մեքենայական ուսուցման և արհեստական բանականության զարգացումը հնարավորություն է տալիս արագ վերլուծել հսկայական թվով հաղորդագրություններ՝

բացահայտելով համակարգված արշավներ և կեղծ օգտահաշիվներ: Ավտոմատացված համակարգերը կիրառվում են երեք հիմնական ուղղություններով՝

- **Բոտերի և կեղծ օգտահաշիվների հայտնաբերում**: Բոտերի հայտնաբերման համակարգերը վերլուծում են օգտահաշիվների վարքագծային առանձնահատկությունները, հրապարակումների կառուցվածքը և հռետորաբանությունը, փոխազդեցությունների խտությունն ու ուղղվածությունը: Botometer-ը գնահատում է հաշիվների վավերականության մակարդակը, Bot Sentinel-ը հայտնաբերում է տրոլային և կցված վարքերը X/Twitter հարթակ:
- **Քարոզչական արշավների մոնիթորինգ:** Քարոզչական բովանդակության մոնիթորինգի գործիքները կենտրոնանում են հեշթեգների յուրացման, կրկնվող հաղորդագրությունների և արհեստական թրենդների բացահայտման վրա: Hamilton 2.0 Dashboard-ը քարտեզագրում է օտարերկրյա քարոզչության թեմաները, իսկ BotSlayer-ը բացահայտում է արհեստական վիրալության դեպքերը:
- **Վիզուալ բովանդակության վավերացում:** Վիզուալ բովանդակության վավերացման համակարգերը կիրառում են թվային փորձաքննություն՝ վերլուծելով պիքսելային անոմալիաները, մետատվյալները և խմբագրման հետքերը: Jeffrey's Image Metadata Viewer-ը ցուցադրում է մանրամասն EXIF տվյալներ, ներառյալ ստեղծման ամսաթիվը և օգտագործված սարքավորումը:

Կարևոր է հիշել, որ ավտոմատացված գործիքները օժանդակ են և չեն կարող փոխարինել մարդկային վերլուծությանը: Դրանք պետք է օգտագործվեն համակցված՝ որպես առաջնային զտիչ կամ լրացուցիչ վավերացման միջոց:

4.4 Մասնակցային ստուգման մոդելներ

Համագործակցային ստուգումը (crowdfact-checking) օգտագործում է համայնքի փորձագիտական ներուժը փաստերի վավերացման համար: Քաղաքացիները կարող են ազդարարել կասկածելի բովանդակության մասին, մասնակցել վերլուծությանը և տարածել ստուգված տեղեկատվությունը: Captain Fact հարթակը թույլ է տալիս համայնքի անդամներին համատեղ ստուգել և գնահատել պնդումները, իսկ ClaimBuster-ը ավտոմատ վերհանում է ստուգման ենթակա պնդումները՝ դրանք առաջնահերթացնելով: Այս մոդելն արդյունավետ է հատկապես տեղական համատեքստի և լեզվական նրբությունների հայտնաբերման համար:

Բլոքչեյն հիմքով համակարգերը ստեղծում են ստուգված բովանդակության անփոփոխելի բազա, որտեղ յուրաքանչյուր փաստի ստուգումը գրանցվում է ապակենտրոնացված համակարգում: DIRT Protocol և Trive Verify հարթակները օգտագործում են բլոքչեյն տեխնոլոգիա՝ ապահովելու ստուգված տեղեկատվության անփոփոխելիությունը: Սա ապահովում է թափանցիկություն և կանխում է ստուգված փաստերի հետագա խեղաթյուրումը: Համայնքային մասնակցությունը նաև բարձրացնում է հանրային իրազեկվածությունը և զարգացնում քննադատական մտածողությունը:

4.5 Հայաստանյան վստահելի աղբյուրների համակարգ

Հայաստանում փաստերի ստուգման համար անհրաժեշտ է օգտագործել պաշտոնական և վստահելի աղբյուրների համակարգված մոտեցում: Պետական տեղեկատվական համակարգերը ներառում են իրավական տեղեկատվության բազաներ, դատական համակարգի տվյալներ, ընտրական գործընթացների փաստաթղթեր, պետական գնումների թափանցիկ հարթակներ և կազմակերպությունների պաշտոնական ռեգիստրներ:

Թափանցիկության գործիքները, ինչպիսիք են պաշտոնյաների գույքային հայտարարագրերի համակարգը և նախարարությունների պաշտոնական հրապարակումները, հնարավորություն են տալիս վերաստուգել պաշտոնական տվյալները: Վիճակագրական տեղեկատվության համար առաջնային աղբյուր է Վիճակագրական կոմիտեն, սակայն կարևոր է համեմատել մի քանի աղբյուրների ցուցանիշները՝ ուշադրություն դարձնելով հավաքագրման ժամանակահատվածին և մեթոդաբանական մոտեցումներին:

Տեղական համատեքստի ստուգման համար օգտակար են նաև վստահելի լրատվամիջոցների արխիվները, քաղաքացիական հասարակության մոնիթորինգային զեկույցները և միջազգային կազմակերպությունների հետազոտությունները: Բոլոր աղբյուրները պետք է գնահատվեն քննադատաբար՝ հաշվի առնելով հնարավոր կողմնակալությունը և տեղեկատվության արդիականությունը:

ԲԱԺԻՆ V. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

5.1 Ռազմավարական հաղորդակցության հիմունքները

Ռազմավարական հաղորդակցությունը կազմակերպված և երկարաժամկետ հաղորդակցային մոտեցում է, որը միտված է հասկանալ լսարանի մտածելակերպը և ազդել դրա վրա՝ ձևավորելով կամ պահպանելով ցանկալի վերաբերմունք և վարքագիծ: Այն իրականացվում է տարբեր մակարդակներում՝ ընդհանուր ռազմավարությունից մինչև կոնկրետ գործողություններ: Ըստ ԵՄ-ի և միջազգային փորձի՝ ռազմավարական հաղորդակցությունը կարևոր գործիք է քաղաքական նպատակներին հասնելու համար:

Հիմնական **բնութագրիչներ**՝

- **Պլանավորված հաղորդակցություն**՝ ուղղված է կոնկրետ նպատակներին հասնելուն:
- **Երկարաժամկետություն**՝ ապահովում է կայուն և համակարգված հաղորդակցական գործընթաց:
- **Համակարգվածություն**՝ ապահովում է տարբեր հաղորդագրությունների և միջոցների համադրելիություն:
- **Ռազմավարական նշանակության գործընթաց**՝ կապված կազմակերպության/պետության առաքելության հետ:

- **Հարմարվողականություն**՝ արձագանքում է լսարանի փոփոխվող կարիքներին ու միջավայրին։
- **Թափանցիկություն**՝ հիմնված է պարզ, ստուգելի և բաց տեղեկատվության տրամադրման վրա։

Ռազմավարական հաղորդակցությունը **տարբերվում է** PR-ից (Հանրային կապեր), քարոզչությունից և տեղեկատվական քաղաքականությունից։

Մոտեցում	Նպատակ և բնույթ	Հիմք և մեթոդ	Տևողություն
Ռազմավարական հաղորդակցություն	Վստահության և ռազմավարական փոփոխության ձևավորում	Թափանցիկություն, երկխոսություն	Երկարաժամկետ
PR (Հանրային կապեր)	Դրական իմիջ, հեղինակության բարձրացում	Շուկայական տրամաբանություն, կապ և վստահություն	Կարճ/միջին ժամկետ
Քարոզչություն	Զանգվածային ներգործություն, կարծիքների վերահսկում	Մանիպուլյացիա, ուղղորդված հաղորդագրություններ	Կախված արշավից
Տեղեկատվական քաղաքականություն	Տեղեկատվական հոսքերի կառավարում և հասանելիություն	Կառավարում, կարգավորում	Կախված ռազմավարությունից

ՔՀԿ-ները կամուրջ են պետության և հասարակության միջև, գործում են որպես միջնորդներ պետական մարմինների և հանրության լայն շրջանակների միջև։ **ՔՀԿ-ների դերը ռազմավարական հաղորդակցությունում** դրսևորվում է հետևյալում՝

- Պետական քաղաքականությունները դարձնել հասկանալի հասարակության համար։
- Հասարակության պահանջներն ու մտահոգությունները փոխանցել պետական մարմիններին։
- Զարգացնել հանրային մասնակցության մեխանիզմներ։
- Կատարել պետական մարմինների և քաղաքականությունների այլընտրանքային գնահատումներ։

Ռազմավարական հաղորդակցությունը ոչ միայն ուղղորդում է հաղորդագրությունների բովանդակությունը, այլև սահմանում է դրանց տարածման ձևերն ու մեխանիզմները՝ ապահովելով հանրային ներգրավում և արդյունավետ արձագանք ապատեղեկատվությանը։

5.2 Նարատիվների կառուցվածք և ազդեցություն

Նարատիվը՝ արժեքային և գաղափարական պատմություն է, որի միջոցով հասարակությունը իմաստավորում է իր իրականությունը, ձևավորում ինքնությունը և ազդում վերաբերմունքների ու վարքագծի վրա։

Նարատիվների հիմնական **տեսակները** ներառում են՝

- **Քաղաքական նարատիվներ**՝ արտահայտում են իշխանության, ընդդիմության կամ պետության դիրքորոշումները՝ շեշտադրելով ազգային շահը, թշնամու կերպարը և հաղթանակի ուղին։
- **Մշակութային նարատիվներ**՝ ձևավորում են ազգային ինքնությունը՝ հիմնվելով լեզվի, ավանդույթների, կրոնի և պատմական հիշողության վրա։
- **Արժեքային նարատիվներ**՝ կառուցվում են համամարդկային արժեքների շուրջ՝ ազատություն, արդարություն, հումանիզմ, հավասարություն և ժողովրդավարություն։

ՔՀԿ-ները պետք է ոչ միայն արձագանքեն այլոց նարատիվներին, այլև ձևավորեն **սեփական** նարատիվը, որը հիմնված է փաստերի, հանրության կարիքների և իրենց արժեքային համակարգի վրա։

5.3 Հականարատիվների ձևավորում և արձագանքման ռազմավարություններ

Հականարատիվը ինքնուրույն կառուցված պատմություն է, որը չի սահմանափակվում մանիպուլյատիվ նարատիվների հերքմամբ, այլ ստեղծում է նոր իմաստային դաշտ՝ համահունչ լսարանի հույզերին, փորձառությանը և արժեքներին։ Այն նպաստում է հանրային վստահության ամրապնդմանը և իմաստային տարածության վերականգնմանը։

Արդյունավետ հականարատիվը պետք է ունենա հետևյալ **բնութագրիչները**.

- **Փաստերի վրա հիմնված այլընտրանքային պատմություն**՝ ոչ միայն հերքում, այլ նոր իմաստային դաշտի ստեղծում։
- **Հստակ կառուցվածք և համատեքստային համապատասխանություն**՝ տեղային իրականությանը հարմարեցված բովանդակություն։
- **Արժեքային հիմք**՝ արտացոլող հասարակության ընդհանուր արժեքներն ու սկզբունքները։
- **Հուզական հավասարակշռություն**՝ փաստերի և զգացմունքների ներդաշնակ համադրություն։
- **Վստահելի փաստարկում**՝ ստուգված, պարզ և վստահություն ներշնչող տեղեկատվություն։
- **Կապի և կարեկցանքի վրա հիմնված տոն**՝ խուսափելով հակադրությունից և խթանելով համերաշխությունը։

Օրինակ:

- **Կեղծ նարատիվ:** *«Պետությունը թաքցնում է ճշմարտությունը աղետի մասին»*

- **Հականարատիվ:** *«Պետությունը գործում է թափանցիկ. յուրաքանչյուր տվյալ հրապարակվում է պաշտոնական կայքերում, ՔՀԿ-ները և մեդիան ունեն հասանելիություն բոլոր փաստաթղթերին»*

Հականարատիվների կառուցման մեթոդաբանություն

Հականարատիվի մշակումը սկսվում է **լսարանի խորքային վերլուծությամբ՝** հասկանալու նրա սոցիալ-դեմոգրաֆիկ հատկանիշները, հուզական վիճակը, արժեքային առաջնահերթությունները և տեղեկատվական միջավայրը:

Բաղադրիչ	*Հարցեր*
Սոցիալ-դեմոգրաֆիկ	Ո՞ր խումբն է՝ տարիք, սեռ, բնակավայր, կրթություն
Հուզական վիճակ	Ի՞նչ զգացումներ են գերակշռում՝ վախ, հիասթափություն, հպարտություն
Արժեքային առաջնահերթություններ	Ի՞նչ են նրանք կարևորում՝ անվտանգություն, ազատություն, արդարություն:
Տեղեկատվական միջավայր	Ո՞ր աղբյուրներին են վստահում՝ համայնքային ղեկավարներ, մեդիա, սոց. ցանցեր:
Բովանդակության ընդունելիություն	Որո՞նք են այն թեմաները կամ ձևակերպումները, որոնք կարող են առաջացնել մերժում:

Լսարանի ուսումնասիրությունից հետո հաջորդ փուլն է **հականարատիվի բովանդակության մշակումը՝** հիմնված ստուգված տվյալների, վստահելի փաստերի և լսարանի համար հասկանալի հաղորդակցության ձևերի վրա: Այս փուլում կարևոր է ապահովել բովանդակության հավասարակշռություն՝ միաժամանակ պահպանելով հուզական կապը և արժեհամակարգային համապատասխանությունը:

Բաղադրիչ	*Պարզաբանում*
Փաստարկված բովանդակություն	Ստուգված տվյալներ, իրական պատմություններ, կոնկրետ օրինակներ:
Հուզական հավասարակշռություն	Ընդունել և հարգել լսարանի ապրումները՝ վախ, հպարտություն, հիասթափություն
Լեզվամշակութային համապատասխանություն	Օգտագործել հաղորդակցման այն ձևերը, որոնք ընկալելի են տվյալ լսարանի համար:
Համատեքստի իրազեկություն	Նկատի ունենալ տեղական քաղաքական, կրոնական, պատմական և մշակութային առանձնահատկությունները:
Ոչ հակաքրոպական տոն	Խուսափել «մենք ընդդեմ նրանց» հռետորաբանությունից, կենտրոնանալ «մենք՝ բոլորս» համախմբող ուղերձների վրա:

Արձագանքման ռազմավարություններ

Հականարատիվների արդյունավետ կիրառումը ենթադրում է նաև այնպիսի արձագանքման մեխանիզմներ, որոնք ապահովում են հաղորդակցության արագություն,

ճշգրտություն և կանխարգելիչ ազդեցություն: Այս նպատակով տարբերակվում են երկու փոխլրացնող մոտեցումներ՝ **կանխարգելիչ** և **արձագանքող**, որոնք միասին ձևավորում են ապատեղեկատվությանը հակազդման ամբողջական ռազմավարություն:

- **Կանխարգելիչ մոտեցում**՝ ներառում է մոնիթորինգ, տեղեկատվական բացերի լրացում, մեդիագրագիտության խթանում և նախնական հակազդման մեխանիզմներ (*pre-bunking*)՝ ապատեղեկատվության տակտիկաների վաղ ճանաչման միջոցով:
- **Արձագանքող մոտեցում**՝ կիրառվում է արդեն տարածված ապատեղեկատվության պարագայում և ներառում է արագ արձագանքման մեխանիզմներ, հերքում և համակարգված հաղորդակցություն՝ հիմնված փաստերի և ապացույցների վրա:

Այս երկու մոտեցումների համեմատությունը ներկայացված է ստորև.

Ասպեկտ	Կանխարգելիչ մոտեցում	Արձագանքող մոտեցում
Նպատակ	Կանխել ապատեղեկատվության առաջացումը և տարածումը:	Արձագանքել արդեն տարածված ապատեղեկատվությանը:
Ժամանակային շրջանակ	Նախքան խնդրի առաջացումը:	Խնդրի առաջացումից հետո:
Գլխավոր գործողություններ	Մոնիթորինգ, տեղեկատվական բացերի լրացում, pre-bunking, մեդիագրագիտություն:	Արագ արձագանքում, հերքում, համակարգված արձագանքում:
Առավելություններ	Կանխում է խնդիրը սկզբից, երկարաժամկետ արդյունավետություն:	Արագ արձագանք, հասցեական լուծումներ:
Մարտահրավերներ	Պահանջում է շարունակական ներդրումներ, չափման բարդություն:	

Հաղորդակցման մեխանիզմներ

Հականարատիվների և արձագանքման ռազմավարությունների արդյունավետությունը կախված է ոչ միայն դրանց բովանդակությունից, այլև ճիշտ ընտրված հաղորդակցական մեխանիզմներից: Դրանք ապահովում են, որ մշակված հաղորդագրությունները հասնեն նպատակային լսարանին և ձևավորեն ցանկալի արձագանք:

Հիմնական մեխանիզմներն են.

- **Մեդիա հարթակների բազմազանություն**՝ հաղորդագրությունների տարածում տարբեր ալիքներով՝ սոցիալական մեդիա, հեռուստատեսություն, ռադիո և օֆլայն միջոցառումներ:
- **Թիրախային հաղորդագրություններ**՝ հաղորդակցության ձևերի և լեզվի հարմարեցում տարբեր լսարանների համար:

- **Հանրային ներգրավում՝** բաց քննարկումների, ֆորումների և քաղաքացիական մասնակցության խթանում՝ վստահության ամրապնդման նպատակով:
- **Համագործակցություն՝** պետական մարմինների, ՔՀԿ-ների և մեդիայի համատեղ հաղորդագրություններ՝ միասնական տեղեկատվական դաշտ ձևավորելու համար:

ԲԱԺԻՆ VI. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Տեղեկատվական ճգնաժամերը ժամանակակից հասարակությունների հիմնական մարտահրավերներից են. դրանք խաթարում են հանրային վստահությունը, խանգարում պետական կառույցների և քաղաքացիական հասարակության համագործակցությանը և կարող են խորը ազդեցություն ունենալ ժողովրդավարական կայունության վրա:

Այս բաժինը ներկայացնում է տեղեկատվական ճգնաժամերի տեսակները, դրանց ազդեցությունը և դիմադրողականության ամրապնդման ուղիները՝ ներառյալ կանխարգելիչ և արձագանքման մեխանիզմները:

6.1 Տեղեկատվական ճգնաժամերի տեսակները և ազդեցությունը

Տեղեկատվական ճգնաժամը այն իրավիճակն է, երբ տեղեկատվական միջավայրի խախտումները սպառնում են հանրային կայունությանը և վստահության համակարգին:

Ճգնաժամի տեսակ	Հիմնական բնութագրիչներ	Ազդեցություն ՔՀԿ-ների վրա
Աղետներին առնչվող	Տեղեկատվական անորոշություն և բացեր արտակարգ իրավիճակներում:	Խոչընդոտում է արագ արձագանքման և իրազեկման գործընթացը:
Ռազմաքաղաքական	Արտաքին դերակատարների համակարգված տեղեկատվական գործողություններ:	Վստահության խաթարում և տեղեկատվական դաշտի ապակայունացում:
Սոցիալական բևեռացման	Ներքին բաժանարար գծերի շահարկում և պառակտում:	Հանրային մասնակցության նվազում և սոցիալական լարվածություն:
Ինստիտուցիոնալ վստահության	Պետական և ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ անվստահության սերմանում:	ՔՀԿ-ների գործունեության միջավայրի վատթարացում և հանրային վստահության անկում:

Տեղեկատվական ճգնաժամերը ազդում են ոչ միայն պետական կառույցների, այլև ՔՀԿ-ների և մեդիայի աշխատանքի վրա՝ սահմանափակելով հանրային մասնակցությունը և բարդացնելով հաղորդակցության միջավայրը:

6.2. Կանխարգելիչ և մարդակենտրոն մոտեցումներ տեղեկատվական ճգնաժամերի կառավարման համար

Տեղեկատվական ճգնաժամերին դիմակայելու արդյունավետ միջոցը դրանց կանխարգելումն է: Հասարակության դիմադրողականությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ քաղաքացիներն ունեն գիտելիքներ, վստահելի հարթակներ և մասնակցության հնարավորություններ՝ տեղեկատվությունը քննադատաբար ընկալելու և գնահատելու համար:

Հիմնական կանխարգելիչ մոտեցումները ներառում են.

1. **Մեդիագրագիտություն և քննադատական մտածողություն՝** թիրախային ուսուցման ծրագրեր՝ հատկապես խոցելի խմբերի ընդգրկմամբ:
2. **Համայնքային ցանցեր (օնլայն և օֆլայն)՝** վստահելի տեղեկատվության փոխանակման հարթակների ստեղծում և փոխօգնության մեխանիզմներ ճգնաժամային իրավիճակներում:
3. **Քաղաքացիական մասնակցություն՝** հանրային քննարկումների և մասնակցային մեխանիզմների խթանում՝ վստահության և սոցիալական կապերի ամրապնդման նպատակով:
4. **Բազմալեզու և ներառական հաղորդակցություն՝** տեղեկատվության մատչելիություն փոքրամասնությունների լեզուներով և հատուկ կարիք ունեցող անձանց համար:

Այս կանխարգելիչ միջոցները ձևավորում են դիմադրողական հասարակության հիմքը և նախադրյալ են արդյունավետ արձագանքման ռազմավարությունների համար:

6.3 Արագ և համակարգված արձագանքման մեխանիզմներ

Երբ տեղեկատվական ճգնաժամն արդեն առաջացել է, արդյունավետ արձագանքման համար անհրաժեշտ է արագություն, ճշգրտություն և համակարգվածություն: Ապատեղեկատվության տարածման և ազդեցության նվազեցման նպատակով կիրառվում են **պրոակտիվ արձագանքման հինգաստիճան մեխանիզմներ:**

1. **Մոնիթորինգ և վաղ ազդանշաններ:** Տեղեկատվական միջավայրի շարունակական դիտարկում ավտոմատացված գործիքներով և *early warning system*-երով՝ սպառնալիքները վաղ հայտնաբերելու նպատակով:
2. **Ստուգում և վավերացում:** Փաստերի ստուգման հարթակների ներգրավում և աղբյուրների համադրում՝ տեղեկատվության ճշգրտությունն ապահովելու համար:
3. **Արձագանք**: Պաշտոնական հաղորդագրությունների հրապարակում և ստուգված փաստերի տարածում՝ բազմաալիք հաղորդակցությամբ:
4. **Համագործակցություն**: Պետական մարմինների, ՔՀԿ-ների և մեդիայի համակարգված փոխգործակցություն՝ նույնական և համաձայնեցված հաղորդագրությունների ապահովման նպատակով:
5. **Հետագա վերլուծություն:** Արձագանքման գործընթացից հետո իրականացվող գնահատում և ստանդարտ գործառնական ընթացակարգերի (SOP)-երի թարմացում՝ հիմնված քաղված դասերի վրա:

Արագ արձագանքման ոսկե կանոն (Golden Hour Rule)

Ճգնաժամի առաջին ժամը վճռորոշ է հաղորդակցության արդյունավետության համար։

- Առաջին հաղորդագրությունը պետք է լինի հստակ, պարզ և հիմնված ստուգված փաստերի վրա։
- Լռությունը կամ ուշացումը հանրային ընկալման մեջ կարող է դիտվել որպես տեղեկատվություն թաքցնելու փորձ։

Կանխարգելիչ և արձագանքման մոտեցումների համադրությունը ապահովում է համակարգված տեղեկատվական ճգնաժամերի կառավարում։ Այդ համակարգը դառնում է հիմք պետություն–ՔՀԿ–մեդիա համագործակցության և երկարաժամկետ տեղեկատվական կայունության ձևավորման համար։

ԲԱԺԻՆ VII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐ

7.1 Հասարակական դիմադրողականության ձևավորման գործոններ և փուլեր

Տեղեկատվական միջավայրի կայունությունը պայմանավորված է մի շարք **գործոններով**, որոնք կարող են թե՛ ամրապնդել, թե՛ թուլացնել հանրային վստահությունը։

Նվազեցնող գործոններ	Ամրապնդող գործոններ
Հասարակական բևեռացում	Բազմաշերտ արձագանքման ռազմավարություն
Պոպուլիստական հաղորդակցություն	Ուժեղ հանրային մեդիա
Մեդիայի նկատմամբ ցածր վստահություն	Մեդիագրագիտության բարձր մակարդակ
Թույլ հանրային մեդիա	Քննադատական մտածողություն
Լսարանի մասնատվածություն	Միջազգային համագործակցություն
Սոցցանցերի անքննադատ օգտագործում	Ինստիտուցիոնալ համակարգում

Դիմադրողական հասարակության ձևավորումը դիտարկվում է որպես **բազմափուլ գործընթաց**, որի յուրաքանչյուր փուլ ունի իր առանձնահատկությունն ու ռազմավարական նշանակությունը։ Այս գործընթացը սովորաբար բաժանվում է երեք հիմնական փուլի՝ **դիմադրություն**, **պահպանում** և **հարմարվողականություն**։

Փուլ	Բնութագրություն	Գործիքներ
Դիմադրության փուլ	Կենտրոնանում է նախապայմանների ստեղծման վրա՝ մեդիագրագիտության ծրագրեր, հանրային իրազեկման բարձրացում և կանխարգելիչ մեխանիզմներ։ Այս փուլը միտված է	Մեդիագրագիտության ուսուցում, հանրային իրազեկման արշավներ, քննադատական մտածողության

	հասարակության «իմունիտետի» ձևավորմանը՝ նվազեցնելով տեղեկատվական սպառնալիքների ազդեցությունը:	զարգացում
Պահպանման փուլ	Նպատակ ունի ճգնաժամային իրավիճակներում ինստիտուցիոնալ և կազմակերպչական դիմացկունության ապահովում՝ արագ արձագանքման մեխանիզմների և համակարգված համագործակցության միջոցով:	Ճգնաժամային հաղորդակցման ծրագրեր, հակափաստարկների արագ արձագանքման թիմեր, կեղծ լուրերի մոնիթորինգ
Հարմարվողականության փուլ	Հիմնված է անցյալի փորձի վերլուծության վրա և ուղղված է բարեփոխումների իրականացմանը՝ ապագա սպառնալիքներին ավելի արդյունավետ դիմակայելու համար:	Հետվերլուծության հաշվետվություններ, ռազմավարության վերանայում, միջազգային գործընկերների հետ փորձի փոխանակում

7.2 Ամբողջ հասարակության մոտեցում

«Ամբողջ հասարակության» մոտեցումը (Whole-of-Society Approach) ենթադրում է բոլոր դերակատարների՝ պետական կառույցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և մեդիա համայնքի միջև սերտ համագործակցություն:



Այն միտված է ոչ միայն սպառնալիքների կանխարգելմանը, այլև դիմադրողականության կայուն հիմքերի ստեղծմանը:

Հիմնական **սկզբունքները.**

- **Համապատասխանություն**՝ յուրաքանչյուր կողմ գործում է իր իրավասությունների շրջանակում:

- **Համակարգվածություն**՝ հստակ ինստիտուցիոնալ կառուցվածք և ընթացակարգեր:
- **Թափանցիկություն և պատասխանատվություն**՝ լիարժեք տեղեկացվածություն և պատասխանատվության կրում:

Դերակատարների ներգրավման մոտեցումներ.

Բազմաոլորտային համագործակցության արդյունավետությունը որոշվում է նաև ներգրավված դերակատարների ներուժով և փոխլրացմամբ:

Դերակատար	Ներգրավման եղանակ
Պետական մարմիններ	Քաղաքական որոշումների կայացում, համակարգման պաշտոնական խմբերի կազմում մասնակցություն
Քաղաքացիական հասարակություն	Մոնիթորինգի իրականացում, մեդիագրագիտության ծրագրերի մշակում, անկախ վերլուծական աշխատանք
Մեդիա	Տեղեկատվության տարածում և վավերացում, ապատեղեկատվության բացահայտում
Մասնավոր հատված	Տեխնոլոգիական լուծումների մշակում, տեղեկատվական անվտանգության աջակցություն

Համակարգման մոդելներ.

Բազմաոլորտային համագործակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ընտրված համակարգման մոդելով:

Կենտրոնացված մոդել

- *Կառուցվում է մեկ համակարգող, վերահսկող և արձագանքով մարմնի շուրջ,*
- ✓ Արագ որոշումներ, միասնական հաղորդագրություն
- ✗ Մեծ կախվածություն մեկ կենտրոնից, սահմանափակ ճկունություն



Ցանցային մոդել

Տարբեր սեկտորների համագործակցություն առանց կենտրոնացված կառույցի

- ✓ Ճկունություն, նորարարական մոտեցումներ
- ✗ Համակարգման բարդություն, հակասությունների հավանականություն

Խառը մոդել

- *Պետություն + ցանցային դերակատարներ*
- ✓ Համատեղում է արդյունավետությունը և մասնակցությունը
- ✗ Կառավարման բարձր պահանջներ

Համագործակցության գործիքներ և մեխանիզմներ.

Բազմաոլորտային համագործակցությունն ապահովվում է ինստիտուցիոնալ և տեխնիկական գործիքներով։

- **Ինստիտուցիոնալ մակարդակում** ներառվում են միջգերատեսչական կառույցներ, համագործակցության հուշագրեր և ՔՀԿ-ների ներգրավմամբ ձևավորված աշխատանքային խմբեր։
- **Տեխնիկական գործիքներն** ընդգրկում են տվյալների համօգտագործման հարթակներ, արագ արձագանքման արձանագրություններ, վավերացման մեթոդաբանություններ և ապատեղեկատվության գնահատման համակարգեր։ Հատուկ ուշադրություն է պահանջում մեդիա ենթակառուցվածքի պաշտպանությունը՝ որպես անվտանգություն ապահովող կրիտիկական համակարգ։

Համագործակցության ինստիտուցիոնալ և տեխնիկական գործիքների ներդաշնակ կիրառումը ձևավորում է գործընկերային մշակույթ և ապահովում համակարգային, կանխատեսելի ու կայուն արձագանքման հարթակ՝ դիմադրողական հասարակության ամրապնդման համար։

ԲԱԺԻՆ VIII. ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿԸ

8.1 Ազգային ռազմավարական հիմքերը

ՀՀ **Ազգային անվտանգության ռազմավարությամբ** (2020 թ.) ապատեղեկատվությունը, տեղեկատվական պատերազմներն ու կիբերհարձակումները դիտարկվում են որպես տեղեկատվական անվտանգության հիմնական սպառնալիքներ։ Փաստաթղթում նշվում է, որ տեղեկատվական մանիպուլյացիաները կարող են խաթարել հասարակության կայունությունը և ժողովրդավարական արժեքների համակարգը, ինչի կանխարգելման նպատակով կարևոր է հանրային իրազեկվածության և մեդիագրագիտության մակարդակի բարձրացումը։

ՀՀ վարչապետի 2023 թ. նոյեմբերի 9-ի **N 1319-Ա որոշմամբ** հաստատվել է Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային հայեցակարգը և դրանից բխող **2024–2026 թթ. գործողությունների ծրագիրը**։ Հայեցակարգի նպատակը համապարփակ և համակարգված մոտեցման ձևավորումն է՝ ուղղված ապատեղեկատվության կանխարգելմանը, հայտնաբերմանը և հակազդմանը։

Գործողությունների ծրագրով նախատեսվում են հետևյալ հիմնական ուղղությունները.

- պետական կառույցների կարողությունների զարգացում,
- քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներգրավում արձագանքման մեխանիզմների ձևավորման գործընթացում,
- իրավական դաշտի կատարելագործում՝ խոսքի ազատության և պատասխանատվության հավասարակշռության ապահովմամբ,

- մեդիագրագիտության բարձրացում և հանրային կրթական ծրագրերի զարգացում,
- տեխնոլոգիական գործիքների կիրառում մոնիթորինգի և վերլուծության նպատակով:

8.2 Իրավական դաշտը

Ապատեղեկատվության հակազդման ոլորտում Հայաստանի օրենսդրական հիմքերը ձևավորվում են մի շարք օրենքներով.

- **«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքը** (2020 թ.)՝ հեռարձակողների հաշվետվողականության և ֆինանսական թափանցիկության պահանջներով, ինչպես նաև էթիկայի և ինքնակարգավորման մեխանիզմների սահմանմամբ:
- **Քաղաքացիական օրենսդրության փոփոխությունները** (2021 թ.)՝ վիրավորանքի և զրպարտության համար փոխհատուցման առավելագույն շեմերի սահմանմամբ՝ համապատասխանաբար մինչև 3 և 6 միլիոն դրամ:
- **«Տեղեկատվության ազատության», «Անձնական տվյալների պաշտպանության» և «Գովազդի մասին» ՀՀ օրենքները**, որոնք սահմանում են տեղեկատվության մատչելիության, անձնական տվյալների պաշտպանման և մեդիա գործունեության հիմնական սկզբունքները:

Վերջին տարիներին իրականացված բարեփոխումները միտված են մեդիա դաշտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը: Միաժամանակ, լրատվամիջոցների սեփականության և ֆինանսավորման վերաբերյալ հանրային տվյալների հասանելիության մեխանիզմները դեռ գտնվում են զարգացման փուլում:

8.3 Ինստիտուցիոնալ հիմքերը

Ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտում պետական համակարգում կարևոր դեր ունի **ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, որը զբաղվում է հանրային հաղորդակցության, տեղեկատվական անվտանգության և պետական կառույցների թափանցիկությանն առնչվող աշխատանքների համակարգմամբ:

Հայեցակարգով և գործողությունների ծրագրով նախատեսվում է նաև պետական մարմինների կարողությունների զարգացում և փոխգործակցություն քաղաքացիական հասարակության կառույցների հետ՝ տեղեկատվական միջավայրի կայունության ապահովման նպատակով:

ԲԱԺԻՆ IX. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԱԴԱՊՏԱՑՈՒՄ

9.1 Լիտվայի մոդելը՝ հաջողված փորձ

Լիտվան համարվում է ապատեղեկատվության հակազդման համապարփակ և հաջողված օրինակներից մեկը, որն ընդգրկում է հասարակության բոլոր շերտերը: Մոդելը միավորում է իրավական կարգավորումը, վստահելի մեդիա միջավայրի

ձևավորումը, քաղաքացիական մասնակցության խթանումը և ռազմավարական հաղորդակցության համակարգումը՝ ազգային անվտանգության շրջանակում։

Լիտվայի համակարգի առանցքում է **Ազգային ճգնաժամային կառավարման կենտրոնը (NCMC)**, որը 2020 թվականից ապահովում է սպառնալիքների շուրջօրյա մոնիթորինգ և համակարգված արձագանք։ Կենտրոնը գործում է որպես կապող օղակ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և մեդիա կազմակերպությունների միջև՝ ապահովելով տեղեկատվության արագ փոխանակում և համատեղ արձագանքների մշակում։

Քաղաքացիական հասարակությունը մոդելի հիմնական բաղադրիչն է։ Ակտիվ հասարակական կազմակերպությունները իրականացնում են մեդիագրագիտության ծրագրեր, հակաապատեղեկատվական արշավներ և հանրային իրազեկման նախաձեռնություններ։ Լիտվայում 2014 թվականից գործում է կամավորական **«Էլֆերի» ցանցը**, որը պայքարում է սոցիալական մեդիայում ապատեղեկատվության տարածման դեմ՝ մոնիթորինգի և ազդանշանման մեխանիզմների միջոցով։

Մեդիա դիմադրողականության բարձրացման ուղղությամբ առանձնանում են **«Checked by 15min»** և **«Debunk.org»** նախաձեռնությունները, որոնք իրականացնում են փաստերի ստուգում, մանիպուլյատիվ բովանդակության բացահայտում և մեդիագրագիտության դասընթացներ։ Նրանց աշխատանքը ներառում է առցանց աղբյուրների մշտադիտարկում, վերլուծություն և հանրային կրթական ծրագրեր՝ տարբեր լեզուներով լսարանների համար։

Լիտվայի կառավարությունը 2018–2020 թթ. իրականացրել է համապետական **«Boost Your Immunity» («Բարձրացրու քո իմունիտետը»)** քարոզարշավը՝ ուղղված հանրային իրազեկման բարձրացմանը և տեղեկատվական անվտանգության ամրապնդմանը։ Քարոզարշավը ներառել է սոցիալական նախաձեռնություններ, այդ թվում՝

- **«Եղիր անվտանգ աշխատանքում»**,
- **«Զննիր անվտանգ»**,
- **«Ճանաչիր ստերը»**։

Այս մոտեցումը հիմնված է «ամբողջ հասարակության մասնակցության» սկզբունքի վրա, որտեղ տեղեկատվական սպառնալիքները դիտվում են ոչ միայն որպես մեդիա խնդիր, այլև որպես ազգային անվտանգության մարտահրավեր։ Լիտվան ակտիվորեն համագործակցում է ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի և միջազգային գործընկերների հետ՝ ձևավորելով միավորված հակաապատեղեկատվական արձագանք։

9.2 Տեխնոլոգիական և կրթական նախաձեռնություններ

Debunk.org-ը, հիմնադրված Վիլնյուսում 2018 թվականին, գործում է Բալթյան երկրներում, Ուկրաինայում և Բելառուսում։ Այն անկախ տեխնոլոգիական հարթակ է, որը համադրում է արհեստական բանականության գործիքները և մարդկային փորձաքննությունը՝ ապատեղեկատվությունը հայտնաբերելու և կանխելու նպատակով։ Հարթակը մշտադիտարկում է առցանց աղբյուրները՝ վերլուծելով մանիպուլյատիվ բովանդակությունը և ձևավորելով կանխարգելիչ արձագանքներ։

Debunk.org-ի կրթական բաղադրիչը ներառում է մեդիագրագիտության և քննադատական մտածողության զարգացման ինտերակտիվ ծրագրեր, օրինակ՝

- **Bad News**՝ խաղային հարթակ, որը թույլ է տալիս օգտատերերին հասկանալ մանիպուլյացիայի մեխանիզմները՝ «մտնելով ապատեղեկատվություն ստեղծողի դերում»:
- **Civic Resilience Course**՝ քննադատական մտածողության և տեղեկատվական դիմադրողականության դասընթաց:
- **InfoShield Media Literacy Course**՝ մեդիագրագիտության խորացված ծրագիր՝ նախատեսված դպրոցականների և երիտասարդների համար:

Այս նախաձեռնությունները նպաստում են հանրային գիտակցության բարձրացմանը և տեղեկատվական անվտանգության հմտությունների ձևավորմանը տարբեր թիրախային խմբերի շրջանում:

9.3 Քաղաքացիական դիմադրողականության նախաձեռնություններ

Civic Resilience Initiative (CRI) հասարակական կազմակերպությունը, հիմնադրված 2018 թ., իրականացնում է կրթական, վերլուծական և իրազեկման ծրագրեր՝ ուղղված ապատեղեկատվության, մեդիագրագիտության և կիբերանվտանգության ոլորտներին: CRI-ն կազմակերպում է դպրոցականների, ուսուցիչների, լրագրողների և պետական ծառայողների վերապատրաստումներ, ինչպես նաև ինտերակտիվ մեդիագրագիտության խաղեր, այդ թվում՝ **«Disinformation Challenge»**, որը խթանում է քննադատական մտածողությունը խաղային մեթոդով:

Կազմակերպությունը հանդես է գալիս որպես վերլուծական կենտրոն՝ մոնիթորինգի ենթարկելով ապատեղեկատվական նարատիվները և տրամադրելով ոլորտային զեկույցներ: CRI-ի գործունեությունը դիտվում է որպես երկարաժամկետ ռազմավարական ներդրում՝ ուղղված հանրային դիմադրողականության և ժողովրդավարական գիտակցության ամրապնդմանը:

9.4 Դասեր և կիրառելի մոտեցումներ Հայաստանի համար

Լիտվայի մոդելը ցույց է տալիս, որ ապատեղեկատվության դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ է.

- ապահովել **պետական կառույցների, մեդիայի և հասարակության համագործակցված արձագանք**,
- ներդնել **մշտադիտարկման և արագ արձագանքման տեխնոլոգիական համակարգեր**,
- զարգացնել **մեդիագրագիտությունը և քննադատական մտածողությունը**՝ կրթական ծրագրերի միջոցով,
- խթանել **հանրային վստահության բարձրացումը պետական և մեդիա ինստիտուտների նկատմամբ**,
- և ձևավորել **միջազգային համագործակցության կայուն մեխանիզմներ**՝ փորձի փոխանակման և տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով:

Այս մոտեցումները կարող են ծառայել որպես ուղղորդող փորձ Հայաստանի ապատեղեկատվության հակազդման ազգային ռազմավարական համակարգի կատարելագործման համար։

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ապատեղեկատվության դեմ պայքարը պահանջում է համատեղ և համակարգված մոտեցում՝ համադրելով պետական կառույցների, քաղաքացիական հասարակության, մեդիայի և մասնավոր հատվածի ջանքերը։ Այն միայն տեխնոլոգիական կամ իրավական խնդիր չէ. այն վերաբերում է նաև հանրային մտածողության, վստահության և հաղորդակցության մշակույթի ձևավորմանը։

Ձեռնարկի նպատակն է ապահովել գործնական ուղեցույց՝ կիրառական մեթոդաբանությամբ, որը հնարավորություն կտա տարբեր շահառուներին՝ պետական մարմիններին, ՔՀԿ-ներին, մեդիա կառույցներին և մասնավոր սեկտորին, զարգացնել համակարգային կարողություններ ապատեղեկատվության կանխարգելման, հայտնաբերման, արձագանքման և վերականգնման ուղղություններով։

Ապատեղեկատվությանը հակազդելու հաջողված փորձը հիմնվում է երեք հիմնասյուների վրա՝

1. **Իրավական և ինստիտուցիոնալ ամրապնդում**՝ հստակ կանոններով և պատասխանատվության մեխանիզմներով։
2. **Հանրային կրթություն և մեդիագրագիտություն**՝ քննադատական մտածողության զարգացում և վստահելի տեղեկատվական միջավայրի ձևավորում։
3. **Միջազգային համագործակցություն և փորձի փոխանակում**՝ դաշինքների և գործընկերային հարթակների միջոցով համատեղ դիմադրողականության կառուցում։

Այս ձեռնարկը միտված է ստեղծել ընդհանուր սկզբունքների և գործիքակազմի միասնական դաշտ, որը կնպաստի ապատեղեկատվության դեմ կայուն և արդյունավետ պայքարի համակարգի ձևավորմանը Հայաստանում։

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Հայերեն եզրույթ	Անգլերեն եզրույթ	Սահմանում
Ալգորիթմային միջավայր/ քյուրացիա	Algorithmic environment/curation	Սոցիալական ալգորիթմներով բովանդակության ընտրություն ու առաջնահերթավորում՝ ներգրավվածությունը բարձրացնելու տրամաբանությամբ։
Ազդեցիկ անձ	Influencer	Առցանց մեծ լսարան ունեցող անձ, որը կարող է ձևավորել հանրային կարծիք ու վարքագիծ։
Ամպլիֆիկացիա / մասսայականացում	Amplification / Mass amplification	Բովանդակության դիտավորյալ/կոորդինացված

		ուժեղացում՝ հասանելիությունն ու տեսանելիությունը արագ մեծացնելու համար:
Ապատեղեկատվություն	Disinformation	Դիտավորյալ ստեղծված ու տարածված կեղծ/խեղաթյուրված տեղեկատվություն՝ հանրային ընկալումների մանիպուլյացիայի նպատակով:
Արհեստական grassroots շարժում	Astroturfing	Իրական հանրային աջակցության տպավորություն ստեղծելու համար կազմակերպված կեղծ նախաձեռնություն:
Արտաքին տեղեկատվական մանիպուլյացիաներ	Foreign Information Manipulation and Interference (FIMI)	Պետական/ոչ պետական դերակատարների համակարգված գործողություններ՝ ժողովրդավարական գործընթացների վրա ազդելու համար:
Աղբյուրների «լվացում»	Source laundering	Անվստահելի կամ անհայտ աղբյուրի նյութը շրջանառել միջնորդ հրապարակումներով՝ այն «հաստատված» տեսք տալու նպատակով:
Բոտ	Bot	Ավտոմատացված օգտահաշիվ, որը տարածում/մեկնաբանում է բովանդակություն առանց մարդկային միջամտության:
Բոտ-ցանց	Botnet	Կոորդինացված բոտերի խումբ, որը միաժամանակ տարածում է նույն նարատիվները՝ ակտիվության տպավորություն ստեղծելով:
Գեներատիվ արհեստական բանականություն (ԱԲ)	Generative Artificial Intelligence (AI)	Տեխնոլոգիա, որը ստեղծում է նոր բովանդակություն՝ տեքստ, պատկեր, ձայն կամ տեսանյութ:
Դիպֆեյք	Deepfake	ԱԲ-ով ստեղծված կեղծ տեսանյութ/ձայնագրություն, որը ցույց է տալիս երբեք չկատարված գործողություններ:
Էկո խցիկ	Echo chamber	Փակ տեղեկատվական միջավայր, որտեղ հանդիպում է միայն սեփական համոզմունքներին համահունչ բովանդակություն:
Ըստ «Ոսկե ժամի» կանոնի	Golden Hour Rule	Ճգնաժամի առաջին ժամը որոշիչ է՝ պահանջում է արագ, պարզ ու

		փաստերի վրա հիմնված հաղորդագրություն:
Թեմատիկ հեշթեգի յուրացում	Hashtag hijacking	Գոյություն ունեցող հեշթեգի օգտագործումը բնօրինակ նպատակից տարբերվող նպատակով՝ քարոզչական կամ մանիպուլյատիվ ազդեցության համար:
Իրականության չարամիտ տարածում	Malinformation	Իրական տվյալների վնասաբեր օգտագործում՝ համատեքստից դուրս ներկայացնելով:
Կեղծ տեղեկատվություն	Misinformation	Սխալ/ոչ ճշգրիտ բովանդակություն՝ առանց վնաս պատճառելու դիտավորության:
Կրկնության էֆեկտ	Illusory truth effect	Երբ նույն պնդումը հաճախ կրկնվելու արդյունքում ընկալվում է որպես «ճշմարիտ»:
Մեդիագրագիտություն	Media literacy	Մեդիա բովանդակությունը հասկանալու, վերլուծելու, գնահատելու ու ստեղծելու կարողություն:
Նարատիվ	Narrative	Արժեքային/գաղափարական պատմություն, որը ձևավորում է իրականության ըմբռնումը:
Նյութերի ֆիլտրման բալոն	Filter bubble	Ալգորիթմների ձևավորած անձնականացված «պղպջակ», որը սահմանափակում է այլընտրանքային կարծիքները:
Նախականխարգելիչ հակազդում	Pre-bunking	Ապատեղեկատվության տակտիկաները նախապես բացատրել՝ լսարանին «պատվաստելու» մեթոդ:
Պրոպագանդա	Propaganda	Տեղեկատվության մանիպուլյատիվ օգտագործում քաղաքական/գաղափարական նպատակներով:
Ռազմավարական հաղորդակցություն	Strategic communication	Երկարաժամկետ, տվյալահեն և արժեքահեն հաղորդակցություն՝ վստահություն և փոփոխություն ձևավորելու համար:
Ստանդարտ գործառնական ընթացակարգ	Standard Operating Procedure (SOP)	Գրավոր հրահանգներ՝ կրկնվող գործողությունները միատեսակ իրականացնելու համար:
Տրոլ	Troll	Օգտատեր, որը դիտավորյալ գրում է սադրիչ/վիրավորական

		բովանդակություն։
Տրոլ-ֆաբրիկա	Troll farm	Կազմակերպված խումբ, որը համակարգված կերպով ստեղծում/տարածում է մանիպուլյատիվ բովանդակություն։
Փաստերի ստուգում	Fact-checking	Հանրային պնդումների ճշգրտության ստուգում՝ անկախ և օբյեկտիվ աղբյուրներով։
Քաղաքացիական փաստերի ստուգում	Crowdfact-checking	Փաստերի ստուգման մասնակցային մոդել՝ համայնքի ներգրավմամբ։
Ճգնաժամային հաղորդակցություն	Crisis communication	Հաղորդակցություն ճգնաժամի ընթացքում՝ վստահելի, ժամանակին և համակարգված տեղեկատվության ապահովման համար։
Վաղ նախազգուշացման համակարգ	Early Warning System (EWS)	Շարունակական մոնիթորինգ և ազդանշանում՝ սպառնալիքների վաղ հայտնաբերման ու արագ արձագանքի համար։
Հականարատիվ	Counter-narrative	Փաստերի վրա հիմնված այլընտրանքային պատմություն, որը հակադրում է մանիպուլյատիվ նարատիվներին։
Հերքում/քանդարկում	Debunking	Արդեն տարածված կեղծ պնդումների փաստարկված հերքում ու բացատրություն։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ

(Թվային վերլուծության, փաստերի ստուգման, բովանդակության վերլուծության և փաստերի ստուգման գործիքներ)

Գործիք	Նպատակ
ArmNIC	Կայքի դոմեյնի գրանցման տվյալների ստուգում (Հայաստան)
Botometer	Սոցցանցային բոտերի վարքագծի գնահատում և վավերականության վերլուծություն
Bot Sentinel	Տրոլային և կցված վարքի բացահայտում X/Twitter-ում
BotSlayer	Արհեստական վիրալության և կրկնվող հաղորդագրությունների հայտնաբերում
Captain Fact	Համագործակցային ֆակթ-չեքինգ համայնքային մոդելով
ClaimBuster	Ավտոմատ կերպով ստուգման ենթակա պնդումների վերհանում
DIRT Protocol	Բլոքչեյն հիմքով ստուգման հարթակ՝ ապացույցների անփոփոխ գրանցմամբ
Forensically	Պատկերի թվային փորձաքննություն՝ խմբագրման հետքերի բացահայտում
FotoForensics	Պիքսելային անոմալիաների վերլուծություն՝ լուսանկարների վավերացման համար
Google Advanced Search	Վեբ որոնման առաջադեմ հրամաններ՝ աղբյուրների և հրապարակման ժամկետի ստուգման համար
Google Lens	Պատկերների վերլուծություն և տեքստի ճանաչում (OCR)
Hamilton 2.0 Dashboard	Օտարերկրյա քարոզչական թեմաների քարտեզագրում
InVID	Տեսանյութերի վիզուալ վավերացում և մետատվյալների ստուգում
Jeffrey's Image Metadata Viewer	Պատկերի մետատվյալների մանրամասն վերլուծություն
TinEye	Պատկերային հակադարձ որոնում՝ նախորդ օգտագործումների հայտնաբերման համար
Trive Verify	Բլոքչեյն հիմքով փաստերի վավերացման հարթակ
Wayback Machine	Կայքերի պատմական արխիվ և ջնջված բովանդակության վերականգնում
WhoisMind	Կայքի սեփականատիրոջ և գրանցման պատմության ստուգում
YouTube DataViewer	Տեսանյութերի բեռնման ամսաթվի և մանրապատկերների ստուգում